



7. ԴԱՐԴՈՏ ՌԵՍ ՍՈՒՐԱՏ

Ավուր մեկ մարդու՝ մեկ կուգա հոդեմ՝ կեղնի դոնախ, կիշկա եդ օդի պատից տամբուրեմ կախ ա. ա՛խ կենա, ու արտըսունք կը լցվի հաչքեր:

Օդի տեր կասա. - Է՛, դոնախ, հորի՞ն ախ կենես:

Կասա. - Վասն Ասու եղի, էսի զարկող ո՞րն ա, շատ դարտլու եմ, երկու բերան խաղ դանչա, բալքի իմ դարտեր ցրվի:

- Դոնախ, քու դարտեր ի՞նչ ա:

- Իմ դարտեր քուր ու դուր ա*:

- Կանի, - կասա, - խաց բերեմ, խաց ուտենք. նոր տամբուրի տեր գտիմ, բերեմ, քու դարտեր օ դսա էնես. զանի:

Խաց բերին, խաց կերան. չուր դոնախ հաց կերավ. խաց զդոնախ կերավ:

- Դե՛, - ասաց դոնախ, - քու դարտեր դսա էրա, ես եմ զարկող:

Ասաց. - Ես թագավորիմ՝ առեջ ասկար ի, թագավոր մեզի ժողվեց, լցեց գյամին, մենք գացինք, կռիվ երեցինք, թոփ զարկին, մեր գյամին պաթմիշ երեցին, իրեք խոզի մացինք տախտըկիմ կտորին. քամին վերուց մեր տախտակ, առավ գնաց շատ ու քիչ Աստված գիտա. նա՛ սար կերևա, նա՛ ծոր, միայն Աստված վերև կերևա, մեկ էլ տեսա ձեռ մը ծովեն էլավ, մեկ ընկեր տարավ. մացինք երկուսսի, ահով, դողով. գիշեր էտուր վեր մե, էն ձեռ էկավ, մեր մեկել ընկերն էլա տարավ: Ասու մարդ, - ասաց օդի տիրոջ, - ես մացի մերի, թե թէ էն ա ծովու ախն՝ կքաշիմ. թե էն ա, ձեռաց ախն կը քաշիմ, քիչ մը տեղ էլա գացի, տեսա էն ձեռ էլավ. դասաթուրեն

* Խոր, շատ խոր, հեռու (ծ.ա.):

թալի, ծեռ կտրավ, ընկավ մեջ ծովուն. շատ գացի, գացի, բատնիմ ըռաստ էկա. իշկեցի բատնի գլոխ միատակ. մեկ պայիմ ըռեճ կերևա. ես ընծի ընծի ասի. «Իմ տախտակ պտի կապեմ էսա ծովափ»: Կապեցի ի ծովափ, առա պայառ ռեճ. էլա ի բատան, բատնի գլխուց իշկեցի, ի՞նչ փառավոր քաղաք ա. մտա ի քաղաք, իսան դետդի քաղքի մեջ չկա. իշկի էնոց ոյժքներ, մալից մալ, կերակուլից կերակուլ, մեկ չկա ուր մալին գլոխ կայնուկ. շատ պտոտի, մուխ մի կէլեր, էդ մուխ դաստ էրի, գացի իշկեցի աղջիկ մի, բըռ մի խացի գունդ դրեր, աչք առավ հիս, փախավ ի օճախ, ծեռ թալեցի, օճխեն բերի դուս. ասի. «Աղջի, արի դողդուն գրուցա, դու հորին փախար»: «Ապար, - ասաց, - դու խողածին ես»:

Դու գիտցար ես ինչ ի: Ես գիտցա դու վիշապն էր:

- Աղջի, իմալ վիշապ:

Յորի, դու էսա քաղաք չտեսա՞ր, մարդ չկեր ոյժքներ, էն վիշապ հըմեն կլուց:

- Դու իմալ պրծար, - ասի:

Ասաց. - Էնոր գախ գիտեմ, էսա գնդըներ էնու հապով կը դնիմ, խըտ գալուն ես փախիմ, մտիմ էսա օճախ, էլ էնու գլոխ չմտի օճախ, դառնա գէն գնդներ կուտա, հլմե քաշվի, էրթա:

- Աղջի, - ասի, - շատ կա՞ օ գա:

- Վախտ ա, հէլնի, ծովու դեն գա:

Որ ասաց. ես էլա երկու խաց ժիր-ժիր տվի թխել. առա մգրախ մի, գացի բատնի տակ, գխացեր զարկի մգրըխ գլոխ. մեկել տեսա օ վիշապ էլավ գլոխ բատնից իջուց ի քաղքի վերեն, ես մգրախ տվի էդոր բերնի դեմ, բերան էնի տարավ ի խացեր. մգրախ ոյութմիշ էրի ի բերան. խըտ ոյութմիշ էնելուն՝ վիշապ գլխվրավ. ճանտակ ընկավ մեջ քաղքին, կտոր-կտոր էրեցի զվիշապ. դարձա գացի աղջիկե մոտ:

- Աղջի, - ասի, - զվիշապ սպանի, զքաղաք ազատեցի:

Ասաց. - Քաղաք որն ա մացե, մեքի ես եմ:

Ես էլ ասի. - Աստված ծի որցեղեն քյարամ էրեր ա. ես ու դու մնանք էստեղ:

Ասաց օղի տիրոջ. - Ըռես, ես զեդ աղջկան առա, քաղքի մեջ գիներ օսկի շատ կա. փարա շատ. Աստված ծի երկու տղա էլա էտուր էդ կնկա մոտեն:

Օր մը ասի. - Կնիկ, առ մեր ճժեր էրթանք, տես էն տախտակ ես իմալ չարչարանքով էկեր իմ էսա երկիր:

- Ըռես, - ասաց. - առա զիմ կնիկ ու ճիժ, էկա ծովափ:

- Կնիկ, - ասի, - արի զիմ տախտակ քաշիմ վըր ծովուն, նստիմ վերեն, իշկա, իմալ էկեր իմ:

- Ըռես, - ես նստա վեր տախտղկին, քամին մեկ էլ վերուց զիս վըր ծովուն. քանի իմ աչք կառեր, իմ կնիկ ու ճիժ ուրանց ծամեր կը փետին ու չոքերուն կը տփին: Ես էլա շատ տլըպա-տլըպա, չկարցա մեկել օլըրի դըխ իմ կնիկ ու ճիժ: Էկա, էկա երկիր մը վեր էլա դուս: Օր հէլա քաղքիմ մեջ հըմեն աճուճ-մաճուճ մարդիկ կը նմանին, էղոնց զարզանդ այլութուն-այլութունն զիսի փճեցուց, զիմ ճիվ բռնին. տարան տուն. ես չըմ խասկընա էնոնց լիզուն. բեյն մը մնաց. լալ ու գոռուն ընկալ էնոնց մեջվրներ, խարցուցի. - Մերիկ, ի՞նչ ա էղե, հորի՞ն կիլաք:

Ասաց. - Երկնո խրամանք ա էկեր, 40 մարդ մեր երկրեն պտի էրթան խողածնի երկիր:

Ասեցի. - Ի՞նչ խրամանք ա: - Էն ա օ մեր մարդեր պտի էրթան զանին էնոց անդրակներ:

Ասի. - Դու հորի՞ն կիլաք:

Ասին. - Մենք էլա կիլանք օ մեր մարդիկանց կիսուկես չղառնա էտանց:

Ասեցի. - Ձեր մարդկանց ի՞նչ կեղի:

Ասին.- Որդի, քիմիսին սև շուն կը զանի. քիմիսին սև կատու կը զանի, քիմիսին սև ճետ կը զանին:

Ես էլա ասի. - Մարե՛, եբոր կերթան խողածնի խող, ծի էլա ասա:

- Ոե՛ս, - ասաց էն մարդ, - ծի էլ առան, էկան խըտ ուրանց էսա երկիր. որ մեկ ջրին ըռաստ էկա, գախուն 40 էժ կուզար մեր հառեջ, կը խեծեննք, ջրեր կընցնինք. էտոնք էլ էկան, լցվան ձեր երկիր. ես էլա էկա, էղա քեզի դոնախ. համ դու կը դարտոտիք, համ ես էլա զաթի դարտոտ իմ:

Մարդ դամբուրեն առալ տալ. ուր դարտերուն ու դոնխի դարտերուն էզարկ:

